ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 04
Ֆաքս (+374 10) 52 42 82
Էլ. փոստ: minfin@minfin.am
Վեբ կայք: www.minfin.am

10019292

21.02.11 №1/4.1-1/1525-11

Ձեր №

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝
պրն Ա. ՋԱՎԱԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ջավադյան

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, Ձեր ս.թ. հունվարի 27-ի N 15.1-07/0115-11 գրությամբ ներկայացված ««Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և ««Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի առնչությամբ կից Ձեզ է ներկայացնում բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը:

Հարգանքով՝

Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Կատ. Ն. Հարությունյան
Հեռ. 595-263

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«««Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «««Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«««Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «««Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ) ընդունումը կամ չընդունումը ՀՀ պետական բյուջեի և համայնքների բյուջեների մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխման չի հանգեցնում: